Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Դասվարի 2 մասնագետի /17 և 18 դասաժամ/, <<Կերպարվեստ>> /3 դասաժամ/, <<Երաժշտություն>> /3 դասաժամ/, <<Ռուսաց լեզու>> /22 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունն որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/:
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը:
4. Ինքնակենսագրություն:
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի:
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. դեկտեմբերի 11-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոցում:
Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ախպրաձոր, 1-ին փողոց, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-64-63-40 հեռախոսահամարով: